Պատկ. 17

Դ.

Պաղավանքի գոյութիւնը մատենագրական վկայութեամբ 606 թ. հաստատելով, մենք գտանք միայն նորա ծագման ամենաուշ ժամանակը. իրաւունք ունինք ենթադրելու, որ աւելի վաղ պիտի չինուած լինի, քանի որ յիշուած է այդ թուականից աւելի վաղ վանքերի հետ: Բարեբաղդաբար չէնքը ինքը տալիս է մեզ իւր ժամանակը որոշելու հաւանական բանալին: Եկեղեցու նկարագրութիւնից տեսանք, որ մի ձիաւոր պատկերաքանդակ կար առիւծի հետ կռուող, վերեւն էլ գրուած «ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՑ ՏԷՐ»: Հայ եկեղեցիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, թէ հազուագիւտ երեւոյթ չէր հիմնադիրների պատկերները քանդակել իրենց շինած եկեղեցիների պատերի վրայ: Աբաղայի արեւմտեան վէշերին, Մահմուղճուղ կոչուած գիւղում, Հաստիճոյ վանքից եւ Աբաիկ աւանից քիչ արեւմուտք, ունինք մի հնագոյն, փոքրիկ եկեղեցի, մեր կարծիքով ոչ ուշ, քան Զ. դարի վերջերը կամ Է.-ի սկիզբը, որի արեւմտեան դրան գլխին ներսից, Աստուածածնի քանդակի հետ եւ մի աղօթողի քանդակ (Պատկ. 16), տարաբաղդաբար, եղծուած վիճակում մեղ հասած, որ եկեղեցու շինողը պիտի լինի: Աստուածածնի քանդակի մասին պիտի խօսենք յետոյ: Մրենում ունինք Կամսարական իշխանների հետաքրքրական քանդակները (Պատկեր 17. նաեւ Ալիշան, Այրարատ 155). 638 թուականից. հարեւան Վրաստանում Մցխեթի Ս. Խաչի վերայ, Խոժոռնի աւանում ունինք մի իշխանի եւ եպիսկոպոսի քանդակ, Աղթամարում Գագիկ Վասպուրականցու քանդակը Ժ. դարում (Պատկ. 18), Անիում Գագիկ Ա. Բագրատունու, Հաղբատում Սմբատ եւ Գուրգէն Բագրատունիների եւ այլն: Մեր տաճարի վերայ քանդակուած Մանուեղ Ամատունեաց Տէրը ոչ այլ ոք է, բայց եթէ եկեղեցու հիմնադիրը: Պէտք է աշխատենք գտնել նորա ժամանակը, որով գտած կը լինինք նաեւ եկեղեցու շինութեան ժամանակը:

Ամատունեաց տոհմը հայ նախարարական տների մէջ առաջիններից մէկն էր, գոնէ,